Եղիշե Չարենց

Աշխարհիս մեջ ես էլ մե օր...

Աշխարհիս մեջ ես էլ մե օր կանցնեմ անդարձ ու կերթամ,
Ես չեմ նայի, չեմ պահանջի ես փառք ու վարձ ու կերթամ:

Աշուղ Սայաթ-Նովի նման ես էն գլխեն իմացա,
Որ աշխարհում փուչ է ամեն երազ ու լաց ու կերթամ:

Էն էլ, որ ես իմ վառ սրտով ու կարոտով սիրեցի
Քամուն կտամ, կմոռանամ ամեն մի հարց ու կերթամ:

Ու գոգալի պատկերքը վառ, դեմքը մախմուր ու անուշ
Կմոռանամ... կառնեմ խոնավ, հողե մե բարձ ու կերթամ:

Կյանքիս նման հեռու մարդիկ, անանուն ու անծանոթ,
Ձե՛զ կթողնեմ երգերս այս՝ կյանքս երազ ու կերթամ: